տեսս նոցա։ Զի անդ է այժմ Հայոց Աթէնք· զի եւ փոքր տղայք գիտունք եւ հանճարեղք են, հանապազ ի հարցում եւ ի քննումն են· եւ տղայք քչոց եւ ծնծղայս հարկանեն քաղցր եւ ուշիմ, զոր այլ աշխարհ եւ քահանայք ան- 140
զամ չգիտեն։

Եւ է քաղաքն բարելի եւ մրգաւէտ· բայց սեին խիստ լաւ եւ անուշ, մեծ է, գեղին եւ երկայն, մինչ զի խոնթքէրին փէչքէշ կու տա- նին· եւթեն եւ եղով չորակ անուշ։ Այլ եւ սո- 145
բայ քաղաքն խիստ համեղ է· Թօխաթուն՝ բաշան, Հալպայ՝ մրխլան, Խարբերթու՝ չա- խալ հացն· փառք յօրինողին Աստուծոյ։

Նստի անդ պէկլէրպէկի, որպէս Մըսր· մեծ աթոռ է Ասորոց պատրիարգին· եւ ու- 150
նին մեծ աւագ եկեղեցի, որ կոչի Մարիամ· այլ եւ Հայոց աթոռ է։

ԱՐԵՒՈՐԴԻՔ

Եւ Մէրտինու դռան դուրսն տեսաք կռա- տուն մի· ասին թէ սա Արեւորդոց աղօթա- տեղն է, զոր յառաջն ամէն կիրակամտից անդ 155
ժողովեալ մինչ յիրիկունն ուտէին, ըմպէին· եւ յորժամ մթնէր՝ լոյս վառէին, սակաւ մի աղօթէին, ապա գնրադն անցուցեալ անամօթ եւ լրբենի դիմօք իրրեւ զանասուն ընդ մի- միանս պղծէին, հարք ընդ դստերս, եղբարք 160
ընդ քոյս եւ մայրք ընդ որդիս խառնակէին որպէս ի ժամանակս կռապաշտից։ Զայս իմա-

140 յուշիմ։ — 151 յաւագ։ — 154 յարեւորդոց։